

ընկերակցութեամբ Լուսարարական Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. և Տիար Կարպիս Հինգլեանի:

● Գիր. 18 Յուլիս.— Երեկոյեան Ժամը 6-ին, Սպանիոյ ազգային տօնին առիթով, Սպանական Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարական Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., ընկերակցութեամբ Աւագ-Քարզման Հոգւ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեանի և Տիար Կարպիս Հինգլեանի:

● Դշ. 21 Յուլիս.— Երեկոյեան Ժամը 6-ին,

Պենթեկոստի Անկախութեան 128-րդ տարեդարձին առիթով, Պենթեկոստի Ընդհ. Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարական Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինգլեանի:

● Ուր. 30 Յուլիս.— Պենթեկոստի Ընդհ. Հիւպատոս Գրն. Մարտէշ Տիարէ, քաղաքէն պաշտօնով մեկնելուն առիթով, Հրաժեշտի այցելութեան եկաւ Ամեն. Պատրիարք Ս. Լօր:

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ Ի Ր Ա Մ Մ Ա Յ Ր Ա Ր Ո Ւ Ս Ե Ա Կ Պ Ա Տ Ո Ւ Է Ր Ե Ա Ն Ի

(1907 — 1965)

Կարն հիւանդութենէ մը ետք, Հալէպի իր բնակարանին մէջ 1965-ին մահկանացուն կնքեց Տիրամայր Արուսեակ Պատուէրեան, մայրը՝ Միաբաւութեան երիտասարդ անդամներէն Հոգւ. Տ. Կոմիտաս Արքեպս. Պատուէրեանի:

Համգուցեալը բնիկ Այնթապցի, ծնած էր 1907-ին և տարագրութեան ու ջարդի տարապիներէն մագապուած ագտառած՝ իր ծնողքին և ընտանիքին հետ հագիւ կրցած էր ապաստան գտնել Հալէպ, ուր եւ ամուսնացած էր 1922-ին: Ան կազմած էր երջանիկ բոյն մը՝ եկեղեցատիրութեան և ազգային ոգիի մթնոլորտով աւելի: Եւ անկասկածաբար մայր մըն էր, լուսնոյն պէտք և իր զաւակներուն բարօրութեամբը միշտ մտածող:

1942-ին ամծամանակ կերպով կը կորսնցնէ իր ամուսինը, իսկ 1963-ին տխուր արկածի մը գոհ կ'ըլլայ իր երիտասարդ դուստրը:

Յաջորդակամ այս ցաւալի կորուստները զինք կը ցնցեն ֆիզիքապէս և պատճառ կ'ըլլան որ բազմիցս հիւանդանայ, միշտ մնալով սակայն հոգեպէս արի և իր հաւատքին մէջ հաստատ, սոսկ գլխաւորը և մայրը:

Երկնային համգիստ իր հոգիին եւ Աստուծոյ մխիթարութիւնը՝ իր պարագաներուն: